« ____» __________ 20____ թ. №

Ձեր « ____ »__________ 20____ թ. №

**«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»**
**հասարակական կազմակերպության նախագահ**
**տիկին Շ. Դոյդոյանին**

***Հարգելի տիկին Դոյդոյան***

Ի պատասխան Ձեր 28.12.2021թ. թիվ 483250 էլեկտրոնային գրության, Վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏԱՏ) սույնով՝ ըստ Ձեր գրության հարցերի հաջորդականության, տեղեկացնում է հետևյալը.

1. ԱՐՄՍՏԱՏ-ը տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն վարում է «Mulberry-2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով,
2. վերոնշյալ վիճակագրությունը վարելու պարտականությունը համատեղ դրված է Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի և Քարտուղարության վրա,
3. վերոնշյալ վիճակագրությունը ձևավորվում է «Mulberry-2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի «Հարցում» գործիքի միջոցով, ըստ այդմ 2021թ. ամփոփված տվյալներով հարցումների ընդհանուր քանակը կազմել է 214,
4. վերոնշյալ վիճակագրությունը ներառվում և հրապարակվում է վիճակագրական տարեկան ծրագրերի կատարման հաշվետվության «ԱՐՄՍՏԱՏ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում տարվա ընթացքում փաստաթղթաշրջանառության, վերահսկողության վերցված հանձնարարականների կատարման արդյունքների մասին» ենթաբաժնում (տես՝ «2020 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվություն», https://armstat.am/file/doc/99523493.pdf հղմամբ, էջ 64),

ք. Երևան, 0010
Հանրապետության պողոտա,
Կառավարական 3 շենք
☎: (+37411) 52-42-13, Ֆաքս: (+37411) 52-19-21
Էլ. փոստ: info@armstat.am
https://www.armstat.am,https://www.armstatbank.am

5. ԱՐՄՍՏԱՏ-ի տեղեկատվության ազատության համար պարատախանատու պաշտոնատար անձը Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն.Մուշեղյանն է,
6. որպես Տեղեկատվության ազատության համար պարատախանատու պաշտոնատար անձ Ն.Մուշեղյանը նշանակվել է ԱՐՄՍՏԱՏ-ի նախագահի 2019թ. թիվ 131-Ա հրամանով (տես՝ https://armstat.am/file/doc/99517533.pdf հղումը),
7. ԱՐՄՍՏԱՏ-ի Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը մասնակցել է Ձեր կողմից կազմակերպված երկու հեռավար հանդիպումներին, մասնավորապես՝ 2021թ. փետրվարի 15-16-ին՝ «Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում» աշխատաժողովին, հոկտեմբերի 19-ին՝ «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությանը:

*Կից՝ 1 էլեկտրոնային նիշք*

**Հարգանքով՝**

**Գլխավոր քարտուղարին փոխարինող**
**Խ.Վարդանյան**

Recoverable Signature

X

Signed by: VARDANYAN KHACHATUR 2802580167

Կատ.՝ Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին, հեռ.՝ (011) 523 356